ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք քաղաք Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2019թ. N 402-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 24 ՇԵՆՔԻ 21 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Նինա Վարդևանի Անդրեասյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Նինա Վարդևանի Անդրեասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի 24 շենքի 21 բնակարանի (վկայական 0167792, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 24 շենք 21 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2019թ. N 403-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ԾԱԾԿԵՐԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ այգետնակը, ջրավազանն ու պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այգետնակը, ծածկերը, ջրավազանը, սանհանգույցն ու պարիսպը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2019 թվականի օգոստոսի 28-ին տրված N Աբ-1641 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Սուրիկ Ավետիսի Խաչատրյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 3 զանգվածի թիվ 280 հասցեում գտնվող՝ անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1-ին փողոց 280:

2.Սուրիկ Ավետիսի Խաչատրյանին (ծնված՝ 1957 թվականի ապրիլի 01-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1-ին փողոց 280 (ծածկագիր՝ 07-051-0101-0048) հասցեի 0.0500 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 59.62քմ արտաքին (44.82 քմ ներքին) մակերեսով այգետնակը, ընդհանուր 16.71քմ արտաքին (16.26 քմ ներքին) մակերեսով ծածկերը, 15.96 քմ արտաքին (11.97 քմ ներքին) մակերեսով ջրավազանը, 3.07 քմ արտաքին (2.27 քմ ներքին) մակերեսով սանհանգույցը և 1.95քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3.Սուրիկ Ավետիսի Խաչատրյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 13.054,8 (տասներեք հազար հիսունչորս ամբողջ ութ տասնորդական) դրամ՝ 19.78 քմ արտաքին մակերեսով 2002 թվականին կառուցված ծածկերի և սանհանգույցի օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել՝ որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված ընդհանուր 0.0500 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2019թ. N 404-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ այգետնակը, սանհանգույցը, ծածկը, ամառային խոհանոցը, ջրավազանն ու պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, այգետնակը, սանհանգույցը, ծածկը, ամառային խոհանոցը, ջրավազանը, մառանը, զուգարանն ու պարիսպը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0009 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2019 թվականի հուլիսի 18-ին տրված N Աբ -1464 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Արշալույս Կաթմոսի Հարությունյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Ճանաչել Արշալույս Կաթմոսի Հարությունյանի, Մարյամ Ռաֆիկի Հարությունյանի և Կարինե

Ռաֆիկի Հարությունյանի սեփականության իրավունքը իրենց բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0101-0059) փաստացի ավել օգտագործվող 0.0009 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Արշալույս Կաթմոսի Հարությունյանին, Մարյամ Ռաֆիկի Հարությունյանին և Կարինե Ռաֆիկի Հարությունյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամաս 1-ին փողոց 167 հասցեի 0.0509 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 147.4 քմ արտաքին (126.09 քմ ներքին) մակերեսով այգետնակը, ընդհանուր 89.15 քմ արտաքին (77.07 քմ ներքին) մակերեսով սանհանգույցը, ծածկը, ամառային խոհանոցը, ջրավազանը, մառանը, զուգարանը և 1.6 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3.Արշալույս Կաթմոսի, Մարյամ և Կարինե Ռաֆիկի Հարությունյաններին՝ համայնքապետարան, 900105202213 հաշվեհամարին վճարել 7854 (յոթ հազար ութ հարյուր հիթսունչորս) դրամ՝ 11.9 քմ արտաքին մակերեսով 2002 թվականին կառուցված մառանի և զուգարանի օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշման 1-ին կետում նշված ընդհանուր 0.0509 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Հաստատել՝ որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված ընդհանուր 0.0509 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

7.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար :

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հոկտեմբերի 2019թ. N 405-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 49-րդ կետերի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 62-Ն որոշումը, «ԵՐԻՑՈՒԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված շինությունների բաժանման հատակագիծն ու Հայկ Կամունիկի Եղյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Հայկ Կամունիկի Եղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6 շենք 45 բացվածք (վկայական N 05092017-07-0020, տրված 2017 թվականի սեպտեմբերի 5-ին) անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և բաժանվող մասերին տրամադրել հասցեներ՝

1) 76.70 քառակուսի մետր ($S_1$) մակերեսով բաժանվող մասին.
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6/45,

2)42.95 քառակուսի մետր ($S_2$) մակերեսով բաժանվող մասին.
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6/45/1,

3)51.00 քառակուսի մետր ($S_3$) մակերեսով բաժանվող մասին.
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6/45/2:

2.Հայկ Կամունիկի Եղյանին՝ համայնքապետարանի 900105202064 հաշվեհամարին վճարել 10000 (տասը հազար) դրամ՝ հասցեների տրամադրման համար ծառայության վճար:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեների գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 07
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019թ. N 406-Ա

## ՊԱՏՇԳԱՄԲԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի և հիմք ընդունելով Մարինե Մարդիկի Բաղդասարյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Թույլատրել Մարինե Մարդիկի Բաղդասարյանին կատարելու Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 15 շենք 13 բնակարանի (վկայական N 20082013-07-0063, տրված 2013 թվականի օգոստոսի 20-ին) պատշգամբի ընթացիկ նորոգում թեթև կոնստրուկցիաներով՝ առանց նախագծային փաստաթղթերի:

2.Մարինե Մարդիկի Բաղդասարյանին՝ համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ ընթացիկ նորոգման թույլտվության ծառայության վճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2019թ. N 407-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 71-Ն որոշման հավելվածի NN 2, 3 և 6 հատվածներում կատարել վերաբաշխում՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2019թ. N 408-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Լևոն Վարազդատի Գրիգորյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Լևոն Վարազդատի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նուռնուս այգեգործական զանգված թիվ 88 անշարժ գույքի (վկայական՝ 2086933, ծածկագիր 07-051-0101-0270, տրված 2003 թվականի նոյեմբերի 03-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11-րդ փողոց 88:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 10
ք. Բյուրեղավան

**Հավելված N 1**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 09-ի N 407-Ա որոշման

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| Բաժին | խումբ | դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան | Փոփոխ. + / - | Տարի |
|---|---|---|---|---|---|---|
| 02 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն | 1000.0 | +60.0 | 1060.0 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 1833.0 | -130.0 | 1753.0 |
| 05 | 5 | 1 | Ճանապարհային տնտեսություն | 47566.0 | +70.0 | 47636.0 |

**Հավելված N 2**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 09-ի N 407-Ա որոշման

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| *Տողի N* | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված | Տարեկան | Փոփոխ. + / - | Տարի |
|---|---|---|---|---|---|
| *4216* | Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 2640.0 | +60.0 | 2700.0 |
| *4239* | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 5150.0 | -113.0 | 5037.0 |
| *4251* | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 2486.0 | +53.0 | 2539.0 |

**Հավելված N 3**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2019 թվականի հոկտեմբերի 09-ի N 407-Ա որոշման

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի
N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| Բաժին | խումբ | դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդ ված | Տարե կան | Փոփոխ. + / - | տարի |
|---|---|---|---|---|---|---|---|
| 02 | 2 | 1 | Քաղաքացիական պաշտպանություն, որից | | 1000.0 | +60.0 | 1060.0 |
| | | | Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 0.0 | +60.0 | 60.0 |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն, որից | | 1833.0 | -130.0 | 1753.0 |
| | | | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 250"0 | -130.0 | 120.0 |
| 05 | 5 | 1 | Ճանապարհային տնտեսություն, որից | | 47566.0 | +70.0 | 47636.0 |
| | | | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 150.0 | +17.0 | 167.0 |
| | | | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 1536.0 | +53.0 | 1589.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ